

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

Խ.Արքայանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
ֆակուլտետի խորհրդի 2019թ. սեպտեմբերի 9 –ին կայացած թիվ 9 նիստի:
Խորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում էին 20-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2018–19 ուստարում ՄՖԻ ֆակուլտետում իրականացված ուսումնական,
գիտամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին:

դեկան

2. ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանի
քննարկում և հաստատում:

դեկան

3. Ընթացիկ հարցեր: ա) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարություն Գիտության կոմիտեի գիտական եվ գիտատեխնիկական
գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Տարրաչափական
լիթումի նիոբատ-գրաֆեն հիբրիդային նյութի հենքի վրա մակերևույթային
ակուստիկական ալիքների բարձր ջերմաստիճանային սենսորներ» թեմայի
(ղեկավար՝ Էդվարդ Կոկանյան) իրականացման ընթացիկ հաշվետվությունը:

Նիստը սկսվեց ժամանակին: Հաստատվեց օրակարգը:

ԼՍԵՅԻՆ. – 2018–19 ուստարում ՄՖԻ ֆակուլտետում իրականացված ուսումնական,
գիտամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՅԻՆ.- Գ. Դեմիրխանյանը, նա ասաց, որ ֆակուլտետում ոչ մի
կառուցվածքային փոփոխություն չի եղել: Դասախոսական կազմի մեջ էլ
փոփոխություններ չեն եղել, բացառությամբ, որ հրավիրյալ դասախոսներից ոմանք
այլ պաշտոն ստանալու կապակցությամբ հրաժարվել են: Օրինակ՝ Ներկարարյանը
Խաչիկը, ով դառել է ԵՊՀ-ի ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան: Բոլոր
ամբիոններում դրույքների նվազում է եղել, որովհետև ուսանողների թվաքանակը

նվազել է, 4 դրույքով բոլոր տեղերում պակասել է: Ունենք ընդամենը 65 աշխատող: Ներկայացրեց ուսանողների թվաքանակի դինամիկան՝ ավարտել են բակալավրիատում 103, մագիստրատուրայում 64, հեռակա բակալավրիատում 65, ընդհանուր 232 ուսանող: Մենք ունենք զուգահեռ սովորելու հնարավորություն, անցած տարի դիմել էր մեկ ուսանող: Զուգահեռ սովորելուց ստանում է երկու իրար հավասար դիպլոմ: Բակալավրիատի երկրորդ կուրսից սկսած ուսանողը կարող է ստանալ երկրորդ մասնագիտություն (հեռակա) և վճարել ամբողջ գումարի 40-50 %-ը: Մագիստրատուրայում կարող ենք ունենալ նաև ուսանողներ արտասահմանից (այսօրվա դրությամբ ունենք երկու թեկնածու): Ներկայացրեց նաև ընդունված ուսանողների թվաքանակի դինամիկան 2019-2020-ին՝ 600 ուսանող, իսկ 2018-2019-ին՝ 647:

Կնքել ենք պայմանագիր Գյումրիի «Ֆոտոն» վարժարանի հետ, թարմացրել ենք պայմանագիրը աստղադիտարանի հետ, աստղագիտության դասավանդման մեթոդիկայի մասին միջազգային ծրագրին միայն մեկ հոգի է մասնակցել մեր ֆակուլտետից, երրորդ կուրսի ուսանողուհի է և նա հավանաբար կգնա Ֆրանսիա հաջորդ հանդիպման: Մեր ուսանողները մասնակցել են ամառային դպրոցին, մի քանիսը Լենինգրադ են գնացել: Պասիվության պատճառը լեզուներին չտիրապետելն է: Ունենք ֆակուլտետում երկու ֆինանսավորվող լաբորատորիաներ, որոնք դեկավարում են Է. Կոկանյանը և Հ. Միքայելյանին: Ավադություն է դառել «Մաթեմատիկական կրթություն» միջազգային գիտաժողովը: Դա լավ նախաձեռնություն է, քանի որ մասնակցում են մեր մագիստրոսները, ովքեր այդտեղ շփվում են բարձրակարգ մասնագետների հետ, նաև հանրակրթության շրջանում ունենում են բարձրացում: Ֆիզիկայից ամենամսյա սեմինարներ են լինում: Ֆիզիկա մասնագիտության հոդվածները, որոնք տպվում են բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում, շոշափելի երևում են համալսարանի մակարդակով: Է. Կոկանյանը մեկ ամսով գործուղվել էր Փարիզ, իսկ Լուսինե Դուլդազարյանը՝ Անգլիա: Այս տարի երրորդ անգամ ինֆորմատիկա մասնագիտության ուսանողները մասնակցել են

նախագահի մրցանակին, և նրանցից երկուսը արժանացան նախագահի մրցանակին, այդ մրցանակը ենթադրում է նաև դրամական պարգև: Ա. Թադևոսյանը, նա հարցրեց, այս տարի օլիմպիադայի մասնակիցներից ընդունվածներ կան թե ոչ: Գ. Դեմիրխանյանը, նա պատասխանեց, որ ցավոք չկան, չնայած ֆակուլտետում անցկացրած օլիմպիադայի մասնակիցների մեծ թվաքանակին (100-ից ավելի աշակերտներ):

ՈՐՈՇԵՑԻՆ. - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ. - ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Գ. Դեմիրխանյանը, նա ասաց որ, ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանը ուղարկվել է (էլեկտրոնային փոստով) խորհրդի բոլոր անդամներին և առաջարկներ ու դիտողություններ չի ստացել: Ա. Սահրադյանը, նա ասաց, որ մի առաջարկ ունի 17-րդ կետը տանել հունիս: Գ. Դեմիրխանյանը, նա ասաց, որ կարող է ընթացքում լինեն լրացումներ:

ՈՐՈՇԵՑԻՆ. - (Քվեարկության արդյունքում) Հաստատել:

ԼՍԵՑԻՆ. - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Գիտության կոմիտեյի գիտական եվ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Տարրաչափական լիթիումի նիոբատ-գրաֆեն հիբրիդային նյութի հենքի վրա մակերևութային ակուստիկական ալիքների բարձր ջերմաստիճանային սենսորներ» թեմայի (ղեկավար՝ Էդվարդ Կոկանյան) իրականացման ընթացիկ հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Գ. Դեմիրխանյանը, Ա. Թարոյանը


ՈՐՈՇԵՑԻՆ. - Կատարված աշխատանքները գնահատել բավարար:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի նախագահ՝

Գ.Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝

Ա.Ն. Գրիգորյան



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի

Ֆակուլտետի խորհրդի 2019թ. սեպտեմբերի 20 –ին կայացած թիվ 1 նիստի:

Խորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում էին 20-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի խորհրդի կազմում մասնակի փոփոխություններ կատարելու մասին::

Գ. Դեմիրխանյան

2. ԲԿԾ-ով նախատեսված մանկավարժական և ուսումնական պրակտիկաների, ինչպես նաև մագիստրական մանկավարժահետազոտական և հետազոտական պրակտիկաների կազմակերպման, անցկացման և զնահատման մասին:

Ամբիոնների պրակտիկաների ղեկավարներ,

Է. Գուլյան

3. Ավարտական աշխատանքների և թեզերի թեմաների քննարկում և հաստատում:

Ամբիոնների վարիչներ

4. Ընթացիկ հարցեր:

Նիստը սկսվեց ժամանակին: Հաստատվեց օրակարգը:

ԼՄԵՑԻՆ. – Ֆակուլտետի խորհրդի կազմում մասնակի փոփոխություններ կատարելու մասին::

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-Գ. Դեմիրխանյանը ներկայացրեց այն փաստարկները, որոնց պատճառով ֆակուլտետի խորհրդի կազմում պետք է տեղի ունենա մասնակի փոփոխություններ: Այդ ամենը կապված են երկու ամբիոնների վարիչների

փոփոխության հետ: Խնդրեց ամբիոնի վարիչներին ըստ քվոտաների գրավոր տան այն մարդկանց անունները, ովքեր ընդգրկված կլինեն խարհրդի կազմում: Լուսինե Ղուլդագարյանին հրավիրել ենք մասնակցելու նիստին: Ռոտացիան լինի անպայման: Խորհրդի կազմում ուսանողները պարտադիր չէ որ բոլորը լինեն ուսանողական խորհրդի կազմից: Կարևոր է, որ լավ սովորեն, ակտիվ լինեն, մասնակցեն նիստերին, հարցեր բարձրացնեն: Բոլոր մասնագիտություններից ընդգրկվածություն լինի համապատասխան չափով, լինի նաև ընդգրկվածություն բակալավրիատից և մագիստրատուրայից, թվով ութ հոգի: Լավ կլինի, որ ամենաուշը երեքշաբթի լինեն ցուցակները, որպեսզի դա հիմք ընդունելով զեկուցագիր գրվի, որպեսզի ռեկտորը հրամանագրի խորհուրդի նոր կազմը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- ԲԿԾ-ով նախատեսված մանկավարժական և ուսումնական պրակտիկաների, ինչպես նաև մագիստրական մանկավարժահետազոտական և հետազոտական պրակտիկաների կազմակերպման, անցկացման և գնահատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Դեմիրխանյանը ասաց, որ երեքշաբթի օրը ռեկտորատին պետք է զեկուցի միայն պրակտիկաների վերաբերյալ ամբիոններում քննարկված խնդիրները: Ինչ առաջարկություններ կան ամբիոններից բովանդակային հարցերից սկսած մինչև կազմակերպչական հարցերը: Բոլոր ամբիոններում նիստերը եղել են: Խնդրում եմ միայն պրակտիկայի հետ կապված յուրաքանչյուր ամբիոն քաղվածք ներկայացնի թե ինչ է որոշել ամբիոնը և ինչ առաջարկություններ ունի, որ իմի բերեմ ու միասնական ֆակուլտետի կողմից ներկայացնեմ շեշտելով հանապատասխան ամբիոնները անպայման: Է. Գուլյանը իր ելույթում նշեց, որ մեթոդիստները ապահովում են հիմնական նյութերը: Պետք է պրակտիկայի բազաների հարցը լուծել: Ներգրավենք նաև ավագ դպրոցներ: 4-րդ կուրսի պրակտիկան կկայանա հոկտեմբերի 7-ից լսարանային ծանրաբեռնվածությունը թեթևացնելու համար: Պրակտիկաները բոլոր ամբիոններում բարեխղճորեն

կատարվում է: Մագիստրատուրայի այն ուսանողները, ովքեր դրսից են և մանկավարժական պրակտիկա չեն անցել, կազմակերպել մանկավարժական պրակտիկա: Մենք չունենք այդպիսի փորձ, սա անհրաժեշտ է քննարկել: Հիմնականում տեխնիկական խնդիրներ են առաջանում դպրոցներում տեղ չլինելու պատճառով: Տեղի խնդիր կա 57-րդ դպրոցում:

Գ. Էլոյանը նշեց, որ երրորդ կուրսը գնացել է պրակտիկայի, պրոբլեմ չունենք: Երկրորդ տարին է գնում են ուսումնաճանաչողական պրակտիկայի և ուսանողները բողոքում են որ սկզբունքորեն նույնն են անում, որ կարծես պրակտիկան կրկնվում է, չի լինի, որ նրանց պրակտիկան լինի ակտիվ: Գ. Դեմիրխանյանը փաստեց, որ մագիստրոսների պրակտիկան կարծես ձևական բնույթ է կրում: Խողերյանն ավելացրեց, որ մագիստրոսների պրակտիկան գրանցված է թեզի ղեկավարների վրա: Ունենք 4-5 ուսանող ովքեր չունեն մանկավարժական պրակտիկա, աշխատում են դպրոցում և դպրոցի ժամերը հարմարեցրել են մագիստրատուրայի ժամերի հետ և չեն կարող մի քանի շաբաթ, ամեն օր գնալ պրակտիկայի: Ալ. Ղուշյանն էլ ավելացրեց, որ մագիստրատուրայի պրակտիկայի բովանդակությունը լրիվ անորոշ է: Չենք կարող մագիստրատուրայի մի քանի ուսանողի համար պրակտիկա կազմակերպել:

Այվազյանը առաջարկեց, որ ովքեր մանկավարժական պրակտիկա չեն անցել խումբ ձևավորենք, ղեկավար նշանակենք և շաբաթը մեկ անգամ տանենք դպրոց: Ալ. Ղուշյանը նշեց, որ այդ բացը լրացվել է մագիստրատուրայի ընդունելության մեթոդիկայի քննությամբ: Գ. Դեմիրխանյանն ասաց, որ հարցը պետք է բարձրացնել, թե ինչպես կլուծվի դա, պրակտիկայի վարչության գործն է:

Վ. Վարդապետյանն ասաց, որ մաթեմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում պրոբլեմ չկա:

Հ. Միքայելյանը ամրագրեց, որ մագիստրատուրայի հիմնական նպատակը մագիստրոսական թեզերի գրելն է, պրակտիկան պետք է նպատակաուղղված լինի թեզերի նախապատրաստմանը: Հետազոտության որ փուլում կանցկացնի

փորձարարական աշխատանք: Մենք չենք կարողացել մագիստրոսների պրակտիկան ըստ էության կազմակերպելու: Այվազյանը նշեց, որ համամիտ չէ դրան, որովհետև եթե մագիստրոսը ոչ մի օր դպրոց չի մտել, ինչպես գնա դպրոց աշխատելու: Ալ. Ղուշյանը հայտնեց իր մտահոգությունը, թե ինչպես անենք, որ դպրոցի հետ բացերը լրացնենք: Վ. Վարդապետյանը շարունակեց, որ մաթեմատիկները երեք խումբ են: Երրորդ կուրսը պրակտիկայի է և խնդիր չունենք: Մագիստրոսներին տանում էինք 29-րդ ավագ դպրոց և իրենք դասավանդում էին: Ուսանողների հաճախումը նորմալ է: Ն. Բաբաջանյանն ասաց, որ ուսանողների ուսումնաճանաչողական պրակտիկայի ղեկավարը Սաֆարյանն է, ունենք մանկավարժի և հոգեբանի խնդիր: Հիմա հարցը լուծված չէ:

ՈՐՈՇԵՑԻՆ. - Մինչև երկուշաբթի ներկայացնել ամբիոնների նիստի որոշումը պրակտիկաների կազմակերպման, անցկացման և գնահատման վերաբերյալ դիտողությունները և առաջարկները:

ԼՄԵՑԻՆ. – Ավարտական աշխատանքների և թեզերի թեմաների քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Գ.Դեմիրխանյանն ասաց, որ մաթեմատիկների հետ մեկիկ-մեկիկ նայում էր թեմաները: Տեսական նյութը ներկայացնում են, մոռանում են բանաձևերի համարակալումը փոխել և առանց հասկանալու ինչ-որ բաներ են անում և ասում: Թեմաների հետ կապված ձևաչափը ներկայացրել է Վարդանյան Կամոն: Մենք ունենք կարևորագույն խնդիր. օրը մեջ գանգում են և խնդրում դպրոց ուղարկել մաթեմատիկայի ուսուցիչ, դպրոցներում մաթեմատիկների կարիք կա: Ա. Թադևոսյանն ասաց, որ թեմաները ընտրելիս հաշվի են առել բոլոր դիտողությունները, բոլորն ունեն գիտափորձերի մաս: Ն. Բաբաջանյանը նշեց, որ թեզերի թեմաների վերնագրերը քննարկվել են ամբիոնի նիստում, փոփոխությունները կարվեն և կներկայացվեն: Նույնն ասաց Լ. Ղուլղազարյանը: Գ. Դեմիրխանյանն էլ հավելեց, որ թեմաները լեզվական իմաստով պետք է հասկանալի լինի, եթե ճիշտ է ձևակերպված միանգամից երևում է: Հ. Միքայելյանն առաջարկեց թեմաների վերնագրերն ուղարկել խորհրդի անդամներին,

ծանոթանան և նոր մտածենք հաստատման վերաբերյալ: Գ. Դեմիրխանյանը հավանություն տվեց առաջարկին և ասաց որ Գրիգորյանը այսօր և եթ կուղարկի բոլորին:
ՈՐՈՇԵՑԻՆ.- Ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզերի թեմաների վերնագրերը ուղարկել խորհրդի անդամներին ծանոթանալու համար դրանք հետագայում հաստատելու նպատակով:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի նախագահ՝



Գ.Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝

Ա.Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի

ֆակուլտետի խորհրդի 2019թ. սեպտեմբերի 27 –ին կայացած թիվ 2 նիստի:

Խորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում էին 20-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ավարտական աշխատանքների և թեզերի թեմաների քննարկում և հաստատում:

Ամբիոնների վարիչներ

2. Ընթացիկ հարցեր: ա) Բ.Խողերյանի և Ա. Հարությունյանի համահեղինակած «Տեխնիկական ստեղծագործություն և արդյունաբերական դիզայն» դասընթացի «Լաբորատոր աշխատանքների ուղեցույցը» տպագրության երաշխավորելու մասին:

բ) Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Համլետ Աշոտի Գալստյանի՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների էլեկտրոնային ուսուցման կազմակերպման առանձնահատկությունները միջին դպրոցում» խորագրով թեկնածուական ատենախոսության թեմայի քննարկման և մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սպարտակ Սողոյանին գիտական ղեկավար նշանակելու և ՀՊՄՀ-ի գիտական խորհրդին ներկայացնելու հարցը:

Նիստը սկսվեց ժամանակին: Հաստատվեց օրակարգը:

ԼՄԵՑԻՆ. – Ավարտական աշխատանքների և թեզերի թեմաների քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Հ. Միքայելյանը նշեց, որ ավարտական աշխատանքների նոր ձևաչափը ավելի հետաքրքիր է, միայն ի՞նչ է սպասելիք արդյունքները: Գ.

Դեմիրխանյանը մեկնաբանեց, աշխատանքն անելիս ինչ որ արդյունք ստացվում է, բանաձևի ճշգրտությամբ հնարավոր չէ բացատրել: Չենք կարող գծել և ուղիղ գծով շարժվել: Որոշեցի ամբիոններում որոշակի մասնակցություն ունենալ, իհարկե ոչ բովանդակային առումով: Կարող է աշխատանքների 5%-ի թեմաները մեթոդիկայից չլինել: Բոլոր ամբիոններին ուղարկվել է նոր ձևաչափը: Ավարտական աշխատանքների և թեզերի վերնագրերը նոր ձևաչափով չենք հասցրել գրել, բացատրեց Լ. Ղուլղազարյանը, երկուշաբթի կվերջացնենք: Է. Կոկանյանն առաջարկեց թեմաների վերնագրերը հաստատել հիմա, իսկ սպասելիք արդյունքները ներկայացնել երկուշաբթի: Հ. Միքայելյանն ասաց, որ առաջ կար մեթոդական խորհուրդ ովքեր զբաղվում էին նման հարցերով: Գ. Դեմիրխանյանն ասաց որ կարող ենք հրավիրել մեթոդական խորհուրդ հանգամանալից քննարկելու համար, բայց հատուկ հանձնախումբն ամբիոնն է, այնտեղ քննարկել և հաստատել են: Սպասվելիք արդյունքը բովանդակային է, և ինձ թույլ չեմ տա մտնել դրա մեջ: Հ. Միքայելյանն առաջարկեց հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ.- (Քվեարկության արդյունքում) Ուղարկել թեմաների վերնագրերը հաստատման:

ԼՍԵՑԻՆ. – Ընթացիկ հարցեր: ա) Բ.Խոդերյանի և Ա. Հարությունյանի համահեղինակած «Տեխնիկական ստեղծագործություն և արդյունաբերական դիզայն» դասընթացի «Լաբորատոր աշխատանքների ուղեցույցը» տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Տ. Այվազյանը, Ն. Օրոյանը, ովքեր բարձր գնահատեցին կատարված աշխատանքը և երաշխավորեցին հրատարակման:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Բ.Խոդերյանի և Ա. Հարությունյանի համահեղինակած «Տեխնիկական ստեղծագործություն և արդյունաբերական դիզայն» դասընթացի «Լաբորատոր աշխատանքների ուղեցույցը» երաշխավորել տպագրության:

ԼՍԵՑԻՆ. – ք) Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Համլետ Աշոտի Գալստյանի՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների էլեկտրոնային ուսուցման կազմակերպման առանձնահատկությունները միջին դպրոցում» խորագրով թեկնածուականատենախոսության թեմայի քննարկման և մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սպարտակ Սողոյանին գիտական ղեկավար նշանակելու և ՀՊՄՀ-ի գիտական խորհրդին ներկայացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի հայցորդ Համլետ Աշոտի Գալստյանը հիմնավորեց թեմայի ընտրությունը: Պատասխանեց իրեն տրվող հարցերին: Քննարկեցին թեմայի վերնագրի հայեցի ձևակերպման հարցը: Հ. Միքայելյանն առաջարկեց թեման հաստատել որոշակի փոփոխությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ.– ՀՊՄՀ-ի գիտական խորհրդին ուղղորդել Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Համլետ Աշոտի Գալստյանի «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների էլեկտրոնային ուսուցման հիմնախնդիրը միջին դպրոցում» թեկնածուականատենախոսության թեմայի վերնագիրը և մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սպարտակ Սողոյանին գիտական ղեկավար հաստատելու հարցը:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի նախագահ՝
Խորհրդի նիստի քարտուղար՝



Գ.Գ. Դեմիրխանյան
Ա.Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի

ֆակուլտետի խորհրդի 2019թ. նոյեմբերի 5 –ին կայացած թիվ 3 նիստի:

Խորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում էին 21-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հեռակա բաժնի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

Ն. Օրդյան

2. Հեռակա բաժնի ավարտական աշխատանքների և թեզերի թեմաների քննարկում և հաստատում:

Ա. Թադևոսյան

Է. Կոկանյան

Լ. Ղուլդազարյան

Ա. Սահրադյան

3. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի վերակազմավորման և աշխատանքների կազմակերպման մասին:

Գ. Դեմիրխանյան

4. Ընթացիկ հարցեր: ա) Է. Կոկանյանի և Ա. Թարոյանի «Մեխանիկա, մոլեկուլային ֆիզիկա և էլեկտրամագնիսականություն» ընդհանուր ֆիզիկայի դասընթացի ուսումնական ձեռնարկի համալսարանի գիտական խորհրդին տպագրության երաշխավորելու համար ներկայացնելու հարցը:

Նիստը սկսվեց ժամանակին: Հաստատվեց օրակարգը:

ԼՄԵՑԻՆ. – Հեռակա բաժնի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Ն. Օրդյանը ներկայացրեց հեռակա բաժնի քննաշրջանի ամփոփ արդյունքները: Նա փաստեց, որ հեռակա ուսուցման ուսանողներից

անբավարար ունեն 35 ուսանող, որոնցից 10-ը հեռացվել են, 6-ը ինֆորմատիկա, 2-ը մաթեմատիկա, 1-ը ֆիզիկա, 1-ը տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտությունից: Նա ներկայացրեց նաև ՄՖԻ ֆակուլտետի հեռակա բաժնի 2018-2019 ուս. տարում հեռացման ներկայացված ուսանողների հետևյալ ցուցակը.

1. Թաթուլյան Գուրգեն Սարգսի- ինֆորմատիկա 1-ին կուրսի 2-րդ կիսամյակ (26 կրեդիտ, վճարային պարտք չունի)
2. Սիմոնյան Լիլիթ Նվերի - մաթեմատիկա 4-րդ կուրսի 2-րդ կիսամյակ (20 կրեդիտ, 240 000 դրամ վճարային պարտք)
3. Ղազարյան Վարսենիկ Համլետի – տեխնոլոգիա և ձեռնարկչություն 4-րդ կուրսի 1-ին կիսամյակ (19-կրեդիտ, 137 000 դրամ վճարային պարտք)
4. Արզումանյան Լուսինե Վոլոդյայի - ինֆորմատիկա 3-րդ կուրսի 1-ին կիսամյակ (23 կրեդիտ, 137 000 դրամ վճարային պարտք)
5. Խաչատրյան Դավիթ Վիգենի - ինֆորմատիկա 3-րդ կուրսի 1-ին կիսամյակ (31 կրեդիտ, 145 000 դրամ վճարային պարտք)
6. Դարբինյան Ալիս Արսենի - մաթեմատիկա 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակ (30 կրեդիտ, 240 000 դրամ վճարային պարտք)
7. Մուրադյան Հովիկ Գևորգի – ֆիզիկա 4-րդ կուրսի 2-րդ կիսամյակ (13 կրեդիտ, 30 000 դրամ վճարային պարտք)
8. Գաբրիելյան Ռաֆիկ Ալբերտի - ինֆորմատիկա 4-րդ կուրսի 1-ին կիսամյակ (16 կրեդիտ, 145 000 դրամ վճարային պարտք)
9. Դալլաքյան Հովհաննես Մելիքի - ինֆորմատիկա 4-րդ կուրսի 2-րդ կիսամյակ (23 կրեդիտ, 290 000 դրամ վճարային պարտք)
10. Զաքարյան Հայկ Սամվելի - ինֆորմատիկա 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակ (19 կրեդիտ, 145 000 դրամ վճարային պարտք)

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն:

ԼՄԵՑԻՆ. – Հեռակա բաժնի ավարտական աշխատանքների և թեզերի թեմաների քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Հ. Հարությունյանը ներկայացրեց ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հեռակա բաժնի ավարտական աշխատանքների և թեզերի թեմաները: Նա նշեց, որ բոլոր թեմաները վերաբերվում են ուսուցման գործընթացին: Թերությունները վերացված են, ուսանողները տեղյակ են իրենց թեմաներին, աշխատանքը սկսել են:

Հ. Միքայելյանը ասաց, որ ծանոթացել է թեմաների, շատ գրագետ և լավ են կազմված, լավ է նաև, որ նշված է ղեկավարների գիտական կոչումները:

Է. Կոկանյանը ներկայացրեց ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հեռակա բաժնի ավարտական աշխատանքների և թեզերի թեմաները:

Հ. Միքայելյանն ավելացրեց, որ ծանոթացել է թեմաներին, մի թեման ֆիզիկայից է, իսկ մյուսները ֆիզիկայի դասավանդման մեթոդիկայից: Է. Կոկանյանն ավելացրեց, որ հեռակայում չկա թեմա ֆիզիկայից: Գ. Դեմիրխանյանը բացատրեց, որ ֆիզիկայի դպրոցական դասընթացի մեջ կա ֆիզիկայի ամբողջ դասընթացը և տարրական ֆիզիկա չի լինում:

Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Լ. Ղուլդազարյանն ասաց, որ հեռակա բաժնի ավարտական աշխատանքների և թեզերի թեմաները վերաբերում են դպրոցական մաթեմատիկայի և բուհական մաթեմատիկայի ուսուցման գործընթացին, ամբիոնում թեմաները քննարկվել են, կատարվել են որոշ փոփոխություններ և հաստատվել:

Հ. Միքայելյանը նշեց, որ քննարկումների ժամանակ քննադատությունից պետք չէ նեղվել, դա միայն սխալներն ուղղելու նպատակ է հետապնդում:

Բ. Խողերյանը ներկայացրեց տեխնոլոգիա և ձեռնարկչություն ամբիոնի հեռակա բաժնի ավարտական աշխատանքների և թեզերի թեմաները: Նա նշեց, որ 12 ուսանող ունեն և թեմաները քննարկվել են ամբիոնում ու հաստատվել:

Տ. Այվազյանն ավելացրեց, որ բոլոր թեմաները նորմալ են: Գ. Դեմիրխանյանը նշեց, որ թեմաների կրկնություններ չկան, իսկ Է. Կոկանյանը բացատրեց, որ թեմաների

կրկնություններ կարող են լինել այն պարզ պատճառով, որ ուսանողը տվյալ էեման չի կարողացել բացահայտել և այդ նույն թեման տալիս ենք ուրիշ ուսանողի ով անում է այն ինչ պահանջվում է:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ. – Ֆակուլտետի մեթոդական խորհրդի վերակազմավորման և աշխատանքների կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Դեմիրխանյանին խոսեց ֆակուլտետի մեթոդական խորհրդի վերակազմավորման և աշխատանքների կազմակերպման մասին, որը նախատեսված է ֆակուլտետի կանոնադրությամբ (31-րդ և 32-րդ կետերը): Նա ասաց, որ մեթոդական խորհրդի գործունեությունը առարկայական ծրագրերն են, ուսումնական պլանները: Մասնագիտություն ստանալու համար պետք է անցնի որոշակի առարկաներ, միջմասնագիտական առարկաներ, պետք է տարբերակել այդ առարկաները տարբեր մասնագիտությունների համար:

Լ. Արաբաջյանը նշեց, որ ամբիոնները դա արել են: Գ. Դեմիրխանյանը բերեց օրինակ, որ ֆիզիկա մասնագիտության ուսանողները տեղյակ չեն Մինկովսկու երկրաչափությունից, չնայած երեք տարի անցնում են երկրաչափություն: Մեթոդական խորհրդի կազմում կլինեն միայն ֆակուլտետի խորհրդի անդամներ, ովքեր հարցերը մանրամասն կքննարկեն և կներկայացնեն ֆակուլտետի խորհրդի քննարկման և հաստատման: Լ. Արաբաջյանը հարցրեց թե ինչով է տարբերվելու ուսումնամեթոդական խորհուրդը ֆակուլտետի խորհրդից, միայն ուսանողներով, թե՞ Ալ. Ղուշյանը ասաց, որ լավ է այդպիսի խորհուրդ լինի, ով ավելի մանրամասն քննարկած կլինեն հարցերը և նրանց եզրակացությունը հիմք կհանդիսանա ֆակուլտետի խորհրդում այդ հարցը հաստատելու համար: Գ. Դեմիրխանյանը նշեց նաև, որ անցնում են Թեյլորի շարքեր բայց նույնիսկ այդ շարքի առաջին մի քանի անդամները գրել չգիտեն: Պետք չէ ձևական պլյուս և մինուսներ լինեն: Պետք է բացել չափորոշիչները և տեսնել թե մաթեմատիկայի ուսուցիչ պատրաստելու համար ինչ առարկաներ են պետք: Իսկ մեթոդական խորհուրդ կարելի կազմավորել երկու

եղանակով. ա) մեթոդական խորհուրդ կարող է ստեղծել դեկանը և բ) ֆակուլտետի խորհուրդը: Շ. Միքայելյանն ավելացրեց, որ մեթոդական խորհուրդը խորհրդակցական խորհուրդ է, իրար հետ շփվելու, փորձ փոխանակելու: Ժամանակը ցույց կտա թե ինչ հարցեր կքննարկեն: Է. Կոկանյանը առաջարկեց, որ տարբերակել մեթոդական խորհրդի աշխատանքը, որպեսզի կրկնություն չլինի: Գ. Դեմիրխանյանը բացատրեց, որ մեթոդական խորհուրդը կքննարկի այնպիսի հարցեր, որ կառաջարկի դեկանը կամ ֆակուլտետի խորհուրդը: Գ. Դեմիրխանյանն առաջարկեց այդ խորհրդի մեջ ընդգրկել ամբիոնի վարիչներին և մեկական ներկայացուցիչ ամբիոններից: Քննարկման արդյունքում ընտրվեց և հաստատվեց մեթոդական խորհուրդը հետևյալ կազմով՝

1. Գ. Դեմիրխանյան
2. Ա. Թադևոսյան
3. Է. Կոկանյան
4. Լ. Ղուլդագարյան
5. Ա. Սահրադյան
6. Տ. Այվազյան
7. Շ. Հարությունյան
8. Շ. Միքայելյան
9. Ա. Եգանյան
10. Ալ. Ղուշյան
11. Ս. Հարությունյան

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել (միաձայն) մեթոդական խորհրդի կազմը:

ԼՍԵՑԻՆ. – Ընթացիկ հարցեր

ա) Ա. Գրիգորյանը ներկայացրեց Է. Կոկանյանի և Ա. Թարոյանի «Մեխանիկա, մոլեկուլային ֆիզիկա և էլեկտրամագնիսականություն» ընդհանուր ֆիզիկայի

դասընթացի ուսումնական ձեռնարկի համալսարանի գիտական խորհրդին տպագրության երաշխավորելու համար ներկայացնելու հարցը: Նա ներկայացրեց ամբիոնի նիստի քաղվածքը, առկա երկու դրական գրախոսական կարծիքները, ուսումնական ձեռնարկի հրատարակման համար անհրաժեշտ հիմնավորումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Է. Կոկանյանը, Հ. Միքայելյանը, Գ. Դեմիրխանյանը և ուրիշներ: Նրանք բարձր գնահատեցին կատարված աշխատանքը և երաշխավորեցին հրատարակման:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Դիմել ՀՊՄՀ-ի գիտական խորհրդին՝ հրատարակության երաշխավորելու Է. Կոկանյանի և Ա. Թարոյանի «Մեխանիկա, մոլեկուլային ֆիզիկա և էլեկտրամագնիսականություն» վերնագրով ընդհանուր ֆիզիկայի դասընթացի ուսումնական ձեռնարկը:

բ) Գ. Դեմիրխանյանը փաստեց, որ մինչև նոյեմբերի 20-ը ֆակուլտետում կանցկացվի օլիմպիադաներ մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա առարկաներից:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի նախագահ՝

Խորհրդի նիստի քարտուղար՝



Գ.Գ. Դեմիրխանյան

Ա.Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
ֆակուլտետի խորհրդի 2019թ. դեկտեմբերի 10 –ին կայացած թիվ 4
նիստի:

Խորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում էին 26-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. «Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկաի» ամբիոնի
հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին:

Է. Կոկանյան

2. Երկրորդ կուրսի մագիստրոսների թեզերի կատարման ընթացքի
մասին:

Ա. Թադևոսյան

Է. Կոկանյան

Լ. Ղուլղազարյան

Ա. Սահրադյան

3. Ֆակուլտետի տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում:

Գ.

Դեմիրխանյան

4. Ընթացիկ հարցեր: ա) Մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի
Ստեփանյան Սուսաննայի մագիստրոսական թեզի՝ «Երկրաչափական
անհավասարությունները ավագ դպրոցի մաթեմատիկայի դասընթացում»
վերնագրի ճշգրտման հարցը:

բ) Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի
Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 4-րդ
տարվա հայցորդ Օֆելյա Արաբյանի ատեստավորելու հարցը:

գ) Հայտարարություն

Նիստը սկսվեց ժամանակին: Հաստատվեց օրակարգը:

ԼՍԵՑԻՆ. –«Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի» ամբիոնի հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.–Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Է. Կոկոնյանը ներկայացրեց ամբիոնում կատարված աշխատանքները հաշվետու ժամանակահատվածում: Նա ասաց, որ հաշվետու ուսումնական տարվա համար նախատեսված ուսումնական աշխատանքները կատարվել են ամբողջ ծավալով: Ուսուցման և ուսումնառության բոլոր աշխատանքները կազմակերպվել և իրականացվել են համալսարանի կանոնադրության, գիտխորհրդի, ֆակուլտետի խորհրդի, դեկանատի և ամբիոնի ընդունած որոշումների հիման վրա: Քննարկվել, վերամշակվել և վերահաստատվել են բոլոր առարկաների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները: Վերամշակվել և վերահաստատվել են ըստ ուսումնական պլանի կատարվող լաբորատոր աշխատանքների բացատրականները:

Ուսումնառության արդյունքները համապատասխանում են առարկայական նկարագրերով սահմանված վերջնարդյունքներին:

Ուսումնառության արդյունքների գնահատումը իրականացվել է ուսումնական պլաններում նշված ստուգման ձևերով և առարկայական նկարագրերով սահմանված գնահատման բաղադրիչների հիման վրա ԲՈՒՀ-ում ընդունված ընդհանուր գնահատման համակարգով: Գնահատումը իրականացնելիս հաշվի են առնվել առարկաների առանձնահատկությունները, լաբորատոր և գործնական դասերը: Գնահատման բաղադրիչների մաս է կազմում նաև classroom էլեկտրոնային հարթակում գնահատվող առաջադրանքները:

Ըստ ուսումնական պլանի կազմակերպվել և անցկացվել են բոլոր դասընթացները, ինչպես նաև մանկավարժական և ուսումնական պրակտիկաները: Բոլոր տիպի պրակտիկաներից առաջ կազմակերպվել են կոնֆերանսներ: Ավարտին ուսանողները ներկայացրել են հաշվետվություն և կազմակերպվել են ամփոփիչ կոնֆերանսներ և պրակտիկայի պաշտպանություն ըստ համալսարանի պրակտիկայի

վարչության ներկայացրած ձևաչափի: Ամբիոնում առկա են բոլոր պրակտիկաների թղթապանակները:

Ամբիոնում կազմակերպվել և անցկացվել են գիտական սեմինարներ, որոնք վարել են ամբիոնի դասախոսներ և ինչպես նաև հրավիրյալ պրոֆեսորներ: Ըստ կազմված գրաֆիկի անցակցվել են դասալսումներ, լրացվել են դասալսման համապատասխան նմուշի ձևանմուշները և ամբիոնի նիստերին քննարկվել են դասալսումների արդյունքները: Մշտապես ուշադրության կենտրոնում է եղել classroom հարթակում կատարվող աշխատանքները:

Ամբիոնում սեմինարներ են անցկացրել՝

1. ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյան «Աստղագիտության ժամանակակից խնդիրները» թեմայով:

2. Ֆրանսիայի Savoie Mont Blanc համալսարանի պրոֆեսոր Յանիկ Մուզնիեր «LN բյուրեղի կիրառությունները տարբեր ոլորտներում»

Հաշվետու տարվա ընթացքում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը տպագրել է 14 հոդված, որից 9 բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում, որոնք ներառված են Scopus և WOS շտեմարանում և 9 թեզիսներ, որոնք զեկուցվել են միջազգային կոնֆերանսներում:

Ս.թ. սեպտեմբերի 25-ին մանկավարժական համալսարանում տեղի ունեցել ամբիոնի դասախոս Ա. Դանիելյանի թեկնածուական ատենախոսության պաշտպանությունը Լազերային ֆիզիկա Ա.04.21 մասնագիտությամբ (ֆրանսիական տարբերակ): Պաշտպանության խորհուրդը ձևավորվել էր 3 հայ և 3 ֆրանսիացի անդամներից: Ըստ ֆրանսիական կողմի թեմաների պաշտպանության օրենքների՝ մասնագիտական պաշտպանական խորհրդի կազմում էին 2 համահեղինակ և 2-ական անդամ Հայաստանից և Ֆրանսիայից՝ 2 առաջին ընդդիմախոս և 2 փորձագետ. Յանիկ Մուզնիեր (Ֆրանսիա), Կամո Ահարոնյան (Հայաստան, Պոլիտեխնիկ ինստիտուտ, ՀՊՄՀ հրավիրյալ դասախոս), Նարինե Բաբաջանյան (ՀՊՄՀ դոցենտ) և Նինել

Կոկանյան (Լորենի համալսարանի պրոֆեսոր), ինչպես նաև Սերգեյ Կոստրիցկի՝ Մոսկվայից հրավիրյալ անդամ:

2018 թ. Նոյեմբերի 21-ին տեղի ունեցավ ամբիոնի հայցորդ Արամայիս Սպարտակի Սիմոնյանի «Ավագ դպրոցում «Մոլեկուլային ֆիզիկա» և «Ջերմային երևույթներ» բաժինների դժվար յուրացվող թեմաների դասավանդման մեթոդիկան» ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության նախնական պաշտպանություն:

2019 թ. մայիսի 31-ին տեղի ունեցավ ամբիոնի հայցորդ Ջուլիետա Գագիկի Հարթենյանի «Կոլեկտիվ ուսուցման սկզբունքների իրականացման հիմնահարցերը («Ֆիզիկա» առարկայի դասավանդման օրինակով)» վերնագրով ատենախոսության նախնական պաշտպանությունը:

Հաշվետու տարվա ընթացքում ամբիոնի թվով 10 աշխատակիցներ մասնակցել են մանկավարժական համալսարանում կազմակերպված ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացներին (ֆիզիկա մասնագիտությունից, 36 ժամ տևողությամբ): Դասընթացների ավարտին ստացել են հավաստագրեր:

Ամբիոնի դասախոս Ա. Դանիելյանը որպես փորձագետ մասնակցում է ֆիզիկա առարկայի առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման աշխատանքներին: Ծրագիրը կավարտվի 2020 թվականի հունիս 30-ին :

Հաշվետու տարվա ընթացքում ամբիոնը ունի թվով 14 տպագրություն, որից 9 բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում, որոնք ներառված են Scopus և WOS շտեմարաններում:

Հաշվետու տարվա ընթացքում՝ ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը հունիսի 18-21 ժամանակահատվածում Ֆրանսիայի Գերարդմեր քաղաքում

մասնակցել է “PR'19, Photorefractive Photonics and beyond” միջազգային կոնֆերանսին, հանդես է եկել 3 ստենդային զեկույցներով:

Ամբիոնի 6 աշխատակիցներ մասնակցել են Գիտությունների Ազգային ակադեմիայի ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում տեղի ունեցած “Laser Physics 2019” Միջազգային գիտաժողովին (Աշտարակ, 17-20 Սեպտեմբեր, 2019), հանդես են եկել 1 բանավոր և 3 ստենդային զեկույցներով:

Ամբիոնի 5 աշխատակիցներ մասնակցել են 7th International Symposium on Optics & its applications (OPTICS-2019) (20 - 24 Սեպտեմբեր, 2019, Երևան) միջազգային գիտաժողովին: Հանդես են եկել 1 բանավոր և 1 ստենդային զեկույցներով:

Գիտությունների Ազգային ակադեմիայի ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում տեղի ունեցած “Laser Physics 2019” Միջազգային գիտաժողովին, (Աշտարակ, 17-20 Սեպտեմբեր, 2019) ամբիոնի նախաձեռնությամբ մասնակցել են ֆիզիկա մասնագիտության մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերի և բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողները (առանց զեկույցների):

Մայիսի 6-8-ը ընկած ժամանակահատվածում մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետում կազմակերպված «Աստղագիտության դասավանդումը դպրոցում» միջազգային ծրագրի շրջանակում կազմակերպված սեմինարներին ակտիվորեն մասնակցել են ֆիզիկա և բնագիտություն մասնագիտությունների բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները: Մասնակիցները սեմինարներին ավարտին ստացել են հավաստագրեր:

Ֆիզիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողի Վարդուհի Մկրտչյանը ճանաչվել է ՄՖԻ ֆակուլտետի լավագույն ուսանող:

Ամբիոնը համագործակցում է ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի, Ֆրանսիայի Լորենի համալսարանի Օպտիկական Նյութերի և Ֆոտոնիկական համակարգերի լաբորատորիայի (LMOPS), Իտալիայի Պադովայի համալսարանի

Ֆիզիկայի ֆակուլտետի, Ամերիկայի Միացյալ Նահանգների Սան Անտոնիոյի և Բոզեմանի համալսարանների ֆիզիկայի ֆակուլտետների հետ:

Հաշվետու տարվա ընթացքում համատեղ հետազոտությունների շրջանակներում տպագրվել են 9 հոդվածներ, որոնց մեծ մասը բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում, որոնք ներառված են Scopus և WOS շտեմարաններում:

Համագործակցության շրջանակում ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը հունիս-հուլիս ամիսներին գործուղման է մեկնել ֆրանսիայի Լորենի համալսարան, հանդես է եկել զեկույցներով:

Քվանտային էլեկտրոնիկայի և ինտեգրալային օպտիկայի նոր նյութերի լաբորատորիայի կողմից ստացված արդյունքները զեկույցվել են՝ “Laser Physics 2019” , “7th International Symposium on Optics & it's Applications (OPTICS 2019)” և “PR'19, Photorefractive Photonics and beyond” միջազգային գիտաժողովներում:

Հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ կապերի ձևավորման նպատակով ամբիոնում ամեն տարի կազմվում է դպրոցների այցելության ժամանակացույց և ըստ ժամանակացույցի ամբիոնի աշխատակիցները այցելում են և՛ մարզային, և՛ քաղաքային դպրոցներ:

2019թ. նոյեմբերի 22-ին Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետում անցկացվել է օլիմպիադա «Ֆիզիկա» առարկայից ավագ դպրոցի աշակերտների համար: Օպլիմպիադայի կազմակերպան և անցկացման աշխատանքներին ակտիվ մասնակցություն է ունեցել ամբիոնի դասախոս Ա. Եզանյանը:

Ամբիոնի գործունեությունը մեծապես ուղղված է ուսուցման որակի բարձրացմանը: Որակի ապահովմանն ուղղված աշխատանքներից են՝

SS տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսում, հազեցած լաբորատորիաների առկայությունը, classroom էլեկտրոնային հարթակը,

ամբիոնում կազմակերպվող և իրականացվող սեմինարները, փոխադարձ դասալսումները:

Ս. Հարությունյանը և Գ. Դեմիրխանյանը նշեցին, որ ամբիոնում գիտական հետազոտումները բավականին բարձր մակարդակի են, ինչը արտահայտվել է հավաստագրման հետ կապված մոնիտորինգի կողմից: Չնայած ֆիզիկա մասնագիտության մագիստրատուրայում լավ է ընդունելությունը, բայց բակալավրիատում թե առկա և թե հեռակա ուսուցման գծով տխուր է: Այս ամենը արտահայտվել է նաև օլիմպիադայում մասնակցած աշակերտների թվով (6 հոգի): Չնայած այս ամենին տարբեր դպրոցներից զանգում են և ուզում են մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ: Սովետական կարիներին եղած նման կրիզիսի ժամանակ որոշ դպրոցներից թույլատրեցին հարցազրույցով ընդունվել գարձրագույն ուսումնական հաստատություն: Է. Կոկոնյանը գտավ, որ դա հիմա չի աշխատի, չնայած ֆիզիկան և մաթեմատիկան երկրի պաշտպանության համար ստրատեգիական նշանակություն ունի: Ս. Հարությունյանն ավելացրեց, որ դպրոցում ֆիզիկան անցնում են երկու ժամ և թող ուղեգրով գան սովորեն: Խանգարում է նաև ուսուցչի աշխատավարձի ցածր լինելը: Էլոյանն է գտավ, որ պետք է պետական տեղերն ավելացնեն: Լ. Արաբաջյանը անդրադարձավ այն փասին, որ ԵՊՀ-ում յուրաքանչյուր տպագրված հոդված խրախուսվում է: Գ. Դեմիրխանյանը գտավ, որ դրա համար դեռ պետք է հասունանալ: Է. Կոկոնյանն էլ նշեց, որ Ֆրանսիայում կա պրոֆեսորի հինգ տարբեր մակարդակ և համապատասխանաբար նրանք ստանում են տարբեր մակարդակների աշխատավարձ:

ՈՐՈՇԵՑԻՆ. - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ. – Երկրորդ կուրսի մագիստրոսների թեզերի կատարման ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Հ. Հարությունյանը, ով ներկայացրեց ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի մագիստրոսների թեզերի կատարման ընթացքը: Նա, ասաց որ

անցկացրել են ատեստավորում և արդյունքում պատկերն այսպես է մագիստրատուրայի առաջին կուրսի թեզերի կատարման ընթացքը գնահատվել է բավարար իսկ երկրորդ կուրսինը՝ անբավարար: Երկրորդ կուրսը ատեստացիան չի անցել: Տոներից հետո անելու են երկրորդ ատեստացիան որ տեսնեն փոփոխություն կա թե ոչ: Է. Կոկոնյանը ասաց, որ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում կան ուսանողներ, ովքեր լավ չեն աշխատում դեկավարների հետ: Մի քանի ուսանող ունենք, որ լավ չեն հաճախում: Հնարավոր է լինեն ուսանողներ, որ ատեստացիայի ժամանակ պարզվի, որ պաշտպանության չեն գնալու:

Գ. Դեմիրիսյանը նշեց, որ կայքում դրված են մագիստրոսական թեզին վերաբերվող պահանջները: Թեզը պետք է ունենա գիտական նորույթ, թե որ չափով պարզ չէ: Թեզը պաշտպանելուց անբավարար ստանալը նոնսենս է: Նախապաշտպանություն է անցնում թեզի դեկավարը ասում է այո, գրախոսը ասում է այո և թեզը չի պաշտպանվում: Ս. Հարությունյանն էլ ավելացրեց, որ եթե ամբիոնի վարիչը չի ստորագրում, ապա մագիստրոսին չեն թողնում պաշտպանության:

Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Լ. Ղուլղազարյանն ասաց, որ 22 մագիստրոսներից 21-ի աշխատանքները ձևավորման փուլում են, իսկ 1 ուսանող հավանաբար չի մասնակցի պաշտպանության: Պատկերն ավելի պարզ կլինի դեկտեմբերի վերջին կայանալիք ատեստավորման ժամանակ:

Ա. Սահրադյանը ներկայացրեց տեխնոլոգիա և ձեռարկչություն ամբիոնի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը: Նա ասաց, որ թեզերը գտնվում են ձևավորման փուլում:

ՈՐՈՇԵՑԻՆ. - Ընդունել ի դիտություն:

ԼՍԵՑԻՆ. – Ֆակուլտետի տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Գ. Դեմիրիսյանը, ով ներկայացրեց Ֆակուլտետի տարեկան հաշվետվությունը: Նա ասաց, որ ամբիոնների վարիչները

հաշվետվություն են տալիս, դեկանները նույնպես և վերջում ռեկտորը կազմում է իր հաշվետվությունը: Հաշվետվության էլեկտրոնային տարբերակն ուղարկվել է ֆակուլտետի խորհրդի յուրաքանչյուր անդամի: Խորհրդի կողմից պետք է հաստատվի նաև թղթային տարբերակը: Նա նշեց մի շարք աշխատանքներ, որ կատարվել են ֆակուլտետում: Անդրադարձավ դրական նորություններին, ինչպես նաև փաստեց, որ ընդունելությունը կաղում է, չնայած մաթեմատիկայի առաջին կուրսում ունենք 44 ուսանող:

ՈՐՈՇԵՑԻՆ.- (Քվեարկության արդյունքում՝ միաձայն) Հաստատել:

Ընթացիկ հարցեր. ա)

ԼՍԵՑԻՆ. – Մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Ստեփանյան Սուսաննայի մագիստրոսական թեզի՝ «Երկրաչափական անհավասարությունները ավագ դպրոցի մաթեմատիկայի դասընթացում» վերնագրի ճշգրտման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Լ. Ղուլղազարյանը, Ս. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Ստեփանյան Սուսաննայի մագիստրոսական թեզի վերնագիրը ձևակերպել «Ածանցյալը և ինտեգրալը որպես միջառարկայական կապերի ձևավորման գործոն»:

բ) **ԼՍԵՑԻՆ.** – Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 4-րդ տարվա հայցորդ Օֆելյա Արաբյանի ատեստավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ս. Հարությունյանը, Լ. Ղուլղազարյանը, Լ. Արաբաջյանը, Գ. Դեմիրխանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 4-րդ տարվա հայցորդ Օֆելյա Արաբյանին ատեստավորել

ԼՄԵՑԻՆ. – Գ. Դեմիրխանյանը հայտարարության կարգով ասաց, պետք է ուշադրություն դարձնել մաթեմատիկայի և հայոց լեզվի ուսուցմանը: Դրա համար կազմել են մեկ հանձնաժողով, երկու համանախագահներով. հայոց լեզվի մասով Ա. Դոլուխանյանը, իսկ մաթեմատիկայի մասով Հ. Միքայելյանը: Մենք այն երկու ֆակուլտետներից մեկն ենք, որ այդ հանձնաժողովին պետք է տրամադրենք նյութեր: Ժամանակին մենք անցկացրինք մնացորդային գիտելիքների ստուգում: Այժմյան պայմաններում կա արդեն այդ հանձնաժողովը, որի արած հետևությունները կանդրադառնա ծրագրերի և դրանց դասավանդման մեթոդների վրա: ՀՊՄՀ գիտխորհուրդը ներկայացրեց, որ հանձնաժողովը դիտարկելու է թե ինչու է մաթեմատիկան և հայոց լեզուն այդ վիճակում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Լ. Ղուղազարյանը հարցրեց. ծրագրերն ամբիոնն է անում թե՞ ոչ: Գ. Դեմիրխանյանն էլ ավելացրեց, որ ուսանողի մինիմալ գիտելիքները պետք է աշակերտի բարձրագույն գիտելիքներից բարձր լինեն:

ՈՐՈՇԵՑԻՆ.– Ընդունել ի գիտություն:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի
նախագահ՝



Գ.Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝

Ա.Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի խորհրդի

2020թ. փետրվարի 21 –ին կայացած թիվ 5 նիստի:

Խորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում էին 26-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Մագիստրոսների ատեստավորման մասին:

Ա. Թադևոսյան
Է. Կոկանյան
Լ. Ղուղազարյան
Ա. Սահրադյան

2. Ֆակուլտետի ռազմավարական պլանով նախատեսված 2018-19 թթ. խնդիրների կատարման հաշվետվության քննարկում և հաստատում:

Գ. Դեմիրխանյան

3. Ֆակուլտետի 2020 թվականի տարեկան գործողությունների պլանի քննարկում և հաստատում:

Գ. Դեմիրխանյան

4. Ընթացիկ հարցեր: ա) Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի «Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի» ամբիոնի հայցորդ Սլավիկ Ալավերդյանի «Բազմառարկայական կոմպլեքսայինների համակարգը և դրա ներառումը երկրաչափության ուսուցման գործընթացում» վերնագրով թեկնածուական ատենախոսության թեմայի քննարկման և մ.գ.թ., պրոֆեսոր Ալեքսանդր Ղուչյանին ղեկավար նշանակելու, և ՀՊՄՀ-ի գիտական խորհրդին ներկայացնելու հարցը:

բ) Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի «Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի» ամբիոնի հայցորդ Արաքսյա Հարությունյանի «Մեթոդը որպես մաթեմատիկական կրթության բովանդակության բաղադրիչ» վերնագրով թեկնածուական ատենախոսության թեմայի քննարկման և ֆիզմաթ. գ. թ., դոցենտ, մ.գ.դ. Մանուկ Մկրտչյանին գիտական ղեկավար նշանակելու, և ՀՊՄՀ-ի գիտական խորհրդին ներկայացնելու հարցը:

գ) Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Համլետ Աշոտի Գալստյանի ատեստավորման հարցը:

դ) Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նանա Գրիգորյանին, ԺԳ 00.02 դասիչով՝ «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» /ինֆորմատիկա/ թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու միջնորդության հարցը:

Նիստը սկսվեց ժամանակին: Հաստատվեց օրակարգը:

ԼՍԵՑԻՆ. – Մագիստրոսների ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Ա. Թադևոսյանը, նա նշեց, որ երկու մագիստրոսներ չէին ներկայացել

ատեստավորման օրը, բայց մեկ շաբաթ անց ներկայացել են և ամեն ինչ նորմալ է նրանց մոտ: Երկրորդ կիսամյակից վերականգնվել է մեկ ուսանող, Էլոյանը թեմա է սովել և երկու ամսում թեզ պետք է գրեն նոր թեմայով և նոր դեկավարով: Մինչև վերականգնման հրամանը գալիս հասնում է, լինում է հունվարի վերջը:

Է. Կոկանյանը, նա ասաց, որ ատեստացիան չեն ավարտել, մեկ շաբաթ ուշացել են: Գ. Դեմիրխանյանը ներկայացրեց, որ իր մագիստրոսին պետք է չատեստավորել, քանի որ նա շատ քիչ է ներկայացել: Է. Կոկանյանն ասաց, որ չատեստավորելը չի գրկում պաշտպանությունից: Գ. Դեմիրխանյանն ավելացրեց, որ չատեստավորումը ահագանգ է, կանխարգելիչ միջոցառում, որն զգուշացնում է, որ մագիստրոսը կարող է ունենալ պրոբլեմներ: Ավելի հաճախ պետք է ատեստավորել: Պաշտպանության ժամանակ անբավարար ստանալը նոսսենս է: Որոշակի փուլերով անցնում է և գնահատական է դրվում, իսկ պաշտպանությանը ստանում է 0, պետք է այդ ամենի համար պատասխանատու լինի:

Լ. Ղուլդագարյանը ներկայացրեց մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի մագիստրոսների ատեստավորման արդյունքները: Մարիամ Հովաննիսյանը ամբողջ կիսամյակի ընթացքում ոչինչ չի ներկայացրել և չի ատեստավորվել, ունի նաև առարկայական լուծարքներ: Մեկ հոգի էլ կարող է չկարողանա պաշտպանության օրը գալ, հնարավոր է այդ օրը նա բալիկ ունենա: Ա. Սահրադյանն էլ ներկայացրեց տեխնոլոգիա և ձեռնարկչություն ամբիոնի մագիստրոսների ատեստավորման արդյունքները: Երկրորդ կուրսի բոլոր մագիստրոսները ատեստավորված են: Առաջին կուրսի մագիստրոսների մոտ էլ խնդիրներ չկան:

ՈՐՈՇԵՑԻՆ. - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ. – Ֆակուլտետի ռազմավարական պլանով նախատեսված 2018-19 թթ. խնդիրների կատարման հաշվետվության քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Գ. Դեմիրխանյանը, նա ասաց, որ Ֆակուլտետի ռազմավարական պլանով նախատեսված 2018-19 թթ. խնդիրների կատարման հաշվետվությունը ներկայացված է ամբիոնների հաշվետվությունների հիման վրա:

Լ. Արաբաջյանը, նա խորհրդի ուշադրությունը հրավիրեց հաշվետվության 2.2 կետին, այն որ դասախոսների համար ստեղծված են բոլոր պայմանները, այնինչ մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի երկու դասախոսի մեկ սեղան է հասնում: Լ. Ղուլդագարյանը, նա կատարեց մի շարք լրացումներ մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ: Նա ներկայացրեց լրացումները համապատասխան տեղերում: Գ. Դեմիրխանյանն ասաց, որ ուղղումներից հետո կուղարկի ամբիոններին և երկու օրվա ընթացքում կսպասի պատասխանի:

ՈՐՈՇԵՑԻՆ. - Ուղղումներով հաստատել:

ԼՍԵՑԻՆ. – Ֆակուլտետի 2020 թվականի տարեկան գործողությունների պլանի քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Գ. Դեմիխանյանը, նա առաջ, որ խորհրդի անդամներին ուղարկած ֆակուլտետի 2020 թվականի տարեկան գործողությունների պլանում սևագրածները այս տարվա խնդիրներն են, իսկ անցած տարիների խնդիրներն էլ թողել էր, որ երևա թե ինչ խնդիրներ են մնացել: Եթե կան խնդիրներ որոնք սևագրած չեն, ապա երկու օրվա ընթացքում լրացումները կարմիր գույնով անել և ուղարկել mail-ով:

ՈՐՈՇԵՑԻՆ.– Հաստատել վերամշակված տեսքով:

Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.– ա) Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի «Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի» ամբիոնի հայցորդ Սլավիկ Ալավերդյանի «Բազմառարկայական կոմպետենցիաների համակարգը և դրա ներառումը երկրաչափության ուսուցման գործընթացում» վերնագրով թեկնածուական ատենախոսության թեմայի քննարկման և մ.գ.թ., պրոֆեսոր Ալեքսանդր Ղուշյանին ղեկավար նշանակելու, և ՀՊՄՀ-ի գիտական խորհրդին ներկայացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– մ.գ.թ., պրոֆեսոր Ալեքսանդր Ղուշյանը, նա ներկայացրեց թեմայի արդիականությունը, նպատակը, խնդիրները և վերնագիրը:

ՈՐՈՇԵՑԻՆ. –Ներկայացնել ՀՊՄՀ գիտական խորհուրդ Սլավիկ Ալավերդյանի «Բազմառարկայական կոմպետենցիաների համակարգը և դրա ներառումը երկրաչափության ուսուցման գործընթացում» վերնագրով թեկնածուական ատենախոսության թեմայի քննարկման և մ.գ.թ., պրոֆեսոր Ալեքսանդր Ղուշյանին ղեկավար նշանակելու միջնորդություն:

ԼՍԵՑԻՆ.– բ) Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի «Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի» ամբիոնի հայցորդ Արաքս Հարությունյանի «Մեթոդը որպես մաթեմատիկական կրթության բովանդակության բաղադրիչ» վերնագրով թեկնածուական ատենախոսության թեմայի քննարկման և ֆիզմաթ. գ. թ., դոցենտ, մ.գ.դ. Մանուկ Մկրտչյանին գիտական ղեկավար նշանակելու, և ՀՊՄՀ-ի գիտական խորհրդին ներկայացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ղուլազարյանը, ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Արաբաջյանը, մ.գ.դ.,պրոֆեսոր Հ. Միքայելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. –Ներկայացնել ՀՊՄՀ գիտական խորհուրդ Արաքս Հարությունյանի «Մեթոդը որպես մաթեմատիկական կրթության բովանդակության բաղադրիչ» թեկնածուական ատենախոսության վերնագիրը հաստատելու և ֆիզմաթ. գ. թ., դոցենտ, մ.գ.դ. Մանուկ Մկրտչյանին գիտական ղեկավար նշանակելու միջնորդություն:

ԼՄԵՑԻՆ.– գ) Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Համլետ Աշոտի Գալստյանի ատեստավորման հարցը:

Հ. Գալստյանը ներկայացրել է իր հաշվետվությունը և քաղվածք ամբիոնի նիստից ատեստավորման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Հ. Հարությունյանը, Ա. Թադևոսյանը

ՈՐՈՇԵՑԻՆ. – Ատեստավորել ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Համլետ Աշոտի Գալստյանին:

ԼՄԵՑԻՆ.– դ) Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նանա Գրիգորյանին, ԺԳ 00.02 դասիչով՝ «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» /ինֆորմատիկա/ թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու միջնորդության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Հ. Հարությունյանը, Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա. Թադևոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.– Միջնորդել ՀՊՄՀ-ի գիտական խորհրդին՝ Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նանա Գրիգորյանին, ԺԳ 00.02 դասիչով՝ «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» /ինֆորմատիկա/ թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու համար :

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի նախագահ՝



Գ .Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝

Ա. Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
ֆակուլտետի խորհրդի 2020թ. Ապրիլի 8 –ին ժ. 15⁰⁰ –ին online ռեժիմով տեղի ունենացած թիվ 6 նիստի:

Խորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում էին 23-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ավարտական աշխատանքների և երկրորդ տարվա մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

Ա. Թադևոսյան
Է. Կոկանյան
Լ. Ղուլղազարյան
Ա. Սահրադյան

2. Online ռեժիմով դասապրոցեսների և պրակտիկաների կազմակերպման մասին:

Ն. Օրդյան

3. Ամփոփիչ ավարտական քննությունների կազմակերպման մասին:

Գ. Դեմիրխանյան

4 . Ընթացիկ հարցեր:

Նիստը սկսվեց ժամանակին: Հաստատվեց օրակարգը:

ԼՄԵՑԻՆ. – Ավարտական աշխատանքների և երկրորդ տարվա մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Է. Կոկանյանը, նա ասաց, որ Պրոբլեմներ չկան ոչ մագիստրոսական և ոչ ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ: Մագիստրոսներից մեկը տարեկետման համար դիմում է գրել: Սուսաննան Ֆրանսիայում է, չգիտեմ կարող ենք թողնել պաշտպանություն: Բոլորն աշխատում են իրենց ղեկավարների հետ:

Նախապաշտպանությունը կլինի 8.05-15.05 արանքում:

Լ. Ղուլղազարյանը, նա ներկայացրեց մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում ավարտական աշխատանքների և երկրորդ տարվա մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը, նա ասաց, որ աշխատանքներն ընթանում են բնականոն եղանակով, մեկ անգամ ատեստավորել ենք, երկրորդ անգամ կատեստավորենք ապրիլի վերջին: Կոտոլկյան Հակոբի հարցն է անորոշ, աշխատում են ղեկավարի հետ: Նախապաշտպանությունը 08.05-ից հետո: Մագիստրոսական թեզերը ձևավորման փուլում են: Մի քանի ուսանող էլ դիրքերում են: Ա.Սահրադյանն ասաց, որ հաջորդ շաբաթ

կիրականացնեն նախապաշտպանությունները: Ա. Թադևոսյանը, նա ասաց, որ բոլոր ատեստավորումներն արված են: Մարտի 31-ի դրությամբ յոթ ուսանողի մոտ կան թերություններ: Հեռակա բակալավրում երեք ուսանող չեն ներկայացել ատեստավորման: Մագիստրոսների երկրորդ կուրսում՝ երկու չներկայացած, որոնցից մեկը իմ մագիստրոսն է, ոչ ներկայացել է, ոչ տեսել եմ և նրան չենք թողնելու ատեստավորման: Կկատարենք կրկնակի ատեստավորում 18.04-ից հետո: Գ. Դեմիրխանյանը, նա հարցրեց դուք այդ ուսանողները կորոնավիրուս են տանում: Ա. Թադևոսյան պատասխանեց, որ գնացել են շրջանները և կապի միջոց չունեն: Գ. Դեմիրխանյանը, նա փաստեց, որ ուսանողների հեռացման գործընթացը հետաձգվել է: Պաշտպանության պետք է գան առանց պարտքի, թեկուզ նաև ֆինանսական պարտքի:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունելի գիտություն:

ԼՄԵՑԻՆ. – Online ռեժիմով դասապրոցեսների և պրակտիկաների կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Օրդյանը, նա ներկայացրեց, որ մագիստրոս առաջին կուրսի պրակտիկան ենք կազմակերպում, պետք է նշվի ղեկավարը, կտևի երեք շաբաթ, իսկ հունիսի սկզբին կլինեն միջանկյալները: Երրորդ կուրսերը կանեն տաս շաբաթ դաս և կսկսվի մանկավարժական պրակտիկան: Տեխնոլոգիաների մոտ ուսումնական պրակտիկա է, կմասնակցեն ռոբոտաշինության խմբերի դասին, երեք շաբաթը պրակտիկա է բանկերում, բանկերն աշխատում են պրակտիկան կլինի: Մյուս դպրոցներից տեղակ չեմ: Ամբիոնը կորոշի քանի օր տրամադրի միջանկյալներին: Գ. Դեմիրխանյանը, նա ասաց, որ online դասերի համար Անուշը զեկուցեց, որ 1) մտնենք aspu-ի միջոցով, որ երևա, որ դասերը եղել են, 2) Եթե որևէ դասախոսի փոխարինում են իրենց սեփական mail-ով, ապա ստացվում է այն դասախոսը, ով պետք է դաս աներ, չի արել: Պետք է նշվի, որ x դասախոսի փոխարեն դաս է արել b դասախոսը: Ներսեսյան Սերգեյն է, որ ոչ մի անգամ դաս չի արել: 38 դասախոսներ էին, ովքեր չին օգտագործել google meet-ը: Պետք է ում փոխարինում են, մտնեն նրա mail-ով:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունելի գիտություն:

ԼՄԵՑԻՆ. – Ամփոփիչ ավարտական քննությունների կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Դեմիրխանյանը, նա ասաց, որ մագիստրոսական թեզերը պետք է ունենային արտաքին գրախոս, բայց նախարարի կողմից հրաման է եղել, որ գրախոսություններն արտաքին խլինեն: Ազատության աստիճանը մեծացավ, կարող ենք մենք էլ գրախոսել և այս ամենը մնաց ամբիոնի հայեցողության տակ: Այս տարի կիրառենք հինը: Այն ինչ մյուս ֆակուլտետների համար նոր է, մեզ համար հին է: Գրախոսությունն ունի որոշակի ձև, պետք է պատասխանել որոշ հարցերի (մատչելիությունը, ...): Ներլայիս պայմաններում այդ ձևը պանձառ չեմ գտնում քննարկելու: Է. Կոկանյանը, նա ասաց, որ լավ էլ մշակել էինք, ավելի լավ է կիրառենք: Լ. Ղուլդազարյանը, նա համաձայնեց, որ անցած տաշվա ձևաչափը կարելի է թողնել: Գ. Դեմիրխանյանը, նա հարցրեց, որ

մնացած չափանիշները (գնահատման համակարգը) ևս հողներն է: Ս. Հարությունյանը, նա հարցերեց, թե որ ձևաչափն է լավը՝ նորը, թե՞ հինը: Գ. Դեմիրխանյանը, նա ներկայացրեց, որ Մեծ գիտխորհուրդը մագիստրոսական թեզերի համար ընդունել էր նոր ձևաչափ, որը մեր գրվածից ավելի թույլ է: Այս իրավիճակում որոշեցին կիրառել հինը, միայն մեր ֆակուլտետում է այսպես:

ՈՐՈՇԵՑԻՆ. - (Քվեարկության արդյունքում) Կիրառել անցած տարվանը:

ԼՄԵՑԻՆ. - Ընթացիկ հարցեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Գ. Դեմիրխանյանը, նա հայտարարության տեսքով ասաց, որ վարձավճարների որոշակի դինամիկա կա և դիմումների և վճարների տեսքով: Ռեկտորը նշել էր, որ պարտքը կազմում է 600մլն դրամ՝ 100մլն զեղչերի հետ է կապված, 500մլն դրամ կա պարտք: Մեր մոտ առկայում և հեռակայում 3,5մլն վճարում է եղել: Մենք չենք կարող ճնշումներ կիրառել ուսանողների վրա, հատկապես ավարտական կուրսերի վրա: Ն. Օրդյանը հիշեցրեց, որ ընկեր Դեմիրխանյանի տվյալների մեջ բացակայում են երեկվա կայսօրվա տվյալները: Ուսանողին ուղարկում ենք պատճենահանված և ստորագրված տարբերակը, իսկ դա բանկը որքանով կընդունի պարզ չէ: Առկայի ուսանողները պետք է դիմեն Դոհարիկին, իսկ հեռակայինը՝ Նարինեին: Գ. Դեմիրխանյանը, նա փաստեց նաև, որ չենք կարող թույլ չտալ քննությանը մասնակցել չմուծած վարձի պարճառով: Ամեն առանձին դեպք խորապես կքննարկենք և ճիշտ մոտեցում կգտնենք:

ՈՐՈՇԵՑԻՆ. - Ընդունել ի գիտություն:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի նախագահ՝



Գ.Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝

Ա. Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
ֆակուլտետի խորհրդի 2020թ. հուլիսի 10 –ին ժ. 12⁰⁰ –ին online ռեժիմով տեղի
ունենացած թիվ 7 նիստի:

Խորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում էին 21-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Պետական որակավորման հանձնաժողովների նախագահների
հաշվետվությունների քննարկում:

2. Ընթացիկ հարցեր.

ա) Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Մաթեմատիկայի և
նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական
գիտությունների դոկտոր Մ. Մկրտչյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու
հարցը:

բ) Ֆ.մ.գ.դ Գ. Գ. Դեմիրխանյանի «Հարաբերականության հատուկ տեսության
տարրերը» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության
երաշխավորելու հարցը և ներկայացնել ՀՊՄՀ գիտխորհրդին այն տպագրության
երաշխավորելու համար:

Նիստը սկսվեց ժամանակին: Հաստատվեց օրակարգը:

ԼՄԵՑԻՆ. – Պետական որակավորման հանձնաժողովների նախագահների
հաշվետվությունների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Գ. Դեմիրխանյանը, նա ասաց, որ պետական որակավորման
հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները ուղարկել են իրեն: Նա
ընթերցեց Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի

«Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտությամբ առկա ուսուցմամբ մագիստրոսների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունը: Ամփոփիչ ատեստավորման քննության հանձնաժողովի նախագահն էր Արմեն Հովհաննեսի Հովսեփյանը:

Ամփոփիչ ատեստավորման քննությանը մասնակցել են 5 շրջանավարտ:

Քննությունը հանձնած շրջանավարտները ստացել են բոլորն էլ 5 (հինգ) գնահատական: Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականներ չեն եղել:

Հանձնաժողովը արել է հետևյալ առաջարկությունները մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ. «Արտակարգ դրության պայմաններում, հեռավար ուսուցումը արդյունավետության առումով, իհարկե, 100 տոկոսանոց չէ, բայց ամեն դեպքում 80 տոկոսով ապահովում է դասախոս-ուսանող կապը, նորույթի հաղորդումը: Ամեն դեպքում, ուսուցումը բաց չի մնում, կարևորը դա է: Մագիստրոսական աշխատանքը ինքնուրույն հետազոտական, վերլուծական և կիրառական նշանակության ավարտուն աշխատանք է, որը արտացոլում է տվյալ ոլորտում ուսանողի ձեռք բերած գիտելիքները կիրառելու, ինչպես նաև նոր լուծումներ առաջադրելու հմտությունները: Այդ իսկ պատճառով որակի հետագա բարելավման առումով մագիստրոսական թեմաները պետք է մոտեցնել գործնական աշխատանքներին և Հանրապետության պրոբլեմներին:»

Տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտությամբ հեռակա բաժնի բակալավրիական կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման քննությանը մասնակցել են 14 շրջանավարտ: Քննությունը հանձնած շրջանավարտների ստացած գնահատականներ են. <գերազանց> -5(հինգ), <լավ>- 7(յոթ), <բավարար>-2(երկու) ուսանող, <անբավարար> չի եղել, բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականներ չեն եղել:

Հանձնաժողովը կատարել է հետևյալ առաջարկությունները մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ. «Հեռակա ուսուցումը

հիմնականում կատարվում է ինքնակրթությամբ, արդյունքում ստացած գիտելիքների որակը, այդ թվում նաև առկա ուսուցման դեպքում, կախված է բացառապես ուսանողի եռանդից: Ուսանողները ցուցաբերել են բարձր գիտելիքներ և կատարել են մեծ ծավալի աշխատանք, որը և արտացոլված է նրանց գնահատականներում: Այդ պատճառով հեռակա բակալավրը այսօր համարժեք բարձրագույն կրթությունն է: Աշխատանքների վերաբերյալ էական դիտողություններ չկան:

Մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ կարելի է առաջարկել ավարտական աշխատանքների թեմաները ընտրել պրակտիկ գործնականում ներդրվող ուղղվածության:»

Ռոման Ալահվերդյանն իր հաշվետվության մեջ գրել է, որ իր սպասելիքները ուսանողները գերազանցեցին այն առումով, որ այս դժվարին պայմաններում հնարավորինս կարողացել են անել այն ինչ պահանջվում է բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի համար: Բոլորը բարեհաջող պաշտպանեցին: Հեռավար պաշտպանության մասին ասում են, որ ուսանողները կարող են ընթերցել, բայց այն առավելություն ունի՝ ուսանողները անկաշկանդ են, իսկ հանձնաժողովի անդամների տրված մեկ-երկու հարցը բավարարում է ուսանողների մակարդակը որոշելու համար: Գ. Դեմիրխանյանը, նա ասաց, որ հաշվետվությունները պետք է հաստատենք: Առանձին-առանձին դնենք հաստատման, թե բոլորը միասին: Ա. Ղուչյանը, նա ասաց, որ մարդը կարծիք է հայտնել, դրա ինչը հաստատենք: Իմ կարծիքով պետք է ընդունել ի գիտություն: Միակ դեպքն է այսքան տարիների ընթացքում, որ նախագահի ընտրությունը ճիշտ է եղել: Գ. Դեմիրխանյանը, նա հարցրեց, ով է դեմ և ով է կողմ: Դեմ չկա, հաստատել:

Լ. Ղուլդագարյանը, նա ասաց, որ Հ. Հայրապետյանի կապը վատ է և նա միացել է հեռախոսով: Հ. Հայրապետյանը, նա ասաց, որ ուսանողները լավ տպավորություն են թողել: Բավականին թվով աշխատանքներ գնահատվել են բարձր: Անբավարար գնահատական չի եղել: Գոհ եմ նաև հանձնաժողովի անդամների աշխատանքից: Կային հաջող շրջանավարտներ, ովքեր բոլոր հարցերին լավ պատասխանում էին,

կային նաև թերացողներ: Կան նաև դիտողություններ: Կային ավարտական աշխատանքներ, որտեղ խնդիրների բաժինը կարող էին ավելի լավը լինել: Ընդհանուր առմամբ դրական եմ գնահատում: Հ. Միքայելյանը, նա խնդրեց հաշվետվությունը նորից կարդալ: Ա. Գրիգորյանը կարդաց մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի որակավորման հանձնաժողովների նախագահի հաշվետվությունները: Հ. Միքայելյանը, նա ասաց, որ իր տպավորությամբ մեթոդական աշխատանքները ավելի ցածր են գնահատվել: Մանկավարժության նյութին պետք է ուշադրություն դարձնել: Հ. Հայրապետյանը, նա պատասխանեց, որ դեմ չէ ասված մտքերին: Լ. Ղուղազարյանը, նա նշեց, որ Հ. Միքայելյանի երկու շրջանավարտները գերազանց են ստացել բոլորք դրա՞նում է: Գ Դեմիրխանյանը հիշեցրեց, որ երբ պետական քննություն էին հանձնում և բոլորը չէ որ դիխում էին գրում, ապա քննության հետ կապված էլի հարցեր էին առաջանում, եթե երրորդ կուրսում անցել է որևէ առարկա, ասենք քվանտային մեխանիկա և քննությանը չի հիշում, ուրեմն ի՞նչու են անցնում: Բակալավրիատը ավարտած քանի ուսանող կգա մագիստրատուրա, դա հայտնի չէ: Ս. Հարությունյանը, նա ասաց, որ շրջանավարտը դառնալու է մաթեմատիկայի ուսուցիչ և շեշտը պետք է դրվի նրա վրա թե ուսանողը որքան գիտի մաթեմատիկա և մեթոդիկա, ամբիոնն էլ այդպես է կոչվում: Գ. Դեմիրխանյանը, նա ասաց, որ մյուս տարի թեմաները հաստատելիս անպայման դա հաշվի առնել: Եթե հակադարձ կապով կորոշվեր դասախոսի աշխատավարձի չափը, ապա ամեն ինչ այլ կլիներ: Քվեարկության արդյունքում (միաձայն) հաստատեցին հաշվետվությունները:

Ն. Օրդյանը, նա կարդաց տեխնոլոգիական կրթության որակավորման հանձնաժողովների նախագահի՝ Հովսեփյան Արմեն Հովհաննեսի, հաշվետվությունները: Բակալավրիատի 27 շրջանավարտներից 13-ը ստացել են գերազանց, 14-ը լավ գնահատականներ, մագիստրատուրայում՝ 5-ից 5-ը գերազանց, հեռակայում՝ 14-ից 5-ը՝ գերազանց, 7-ը՝ լավ, 2-ը՝ բավարար: Դիտողություններ չկան:

Կան առաջարկություններ, թեմաները ընտրել պրակտիկ և գործնականում ներդրված ուղղվածությամբ:

Ա. Սահրադյանը, նա ավելացրեց, որ բոլոր գերագանց գնահատական ստացած մագիստրոսները հարգարժան ուսուցիչներ են: Քվեարկության արդյունքում (միաձայն) հաստատեցին հաշվետվությունները: Ինֆորմատիկա մասնագիտությամբ պետական որակավորման հանձնաժողովների նախագահի հաշվետվությունները ընթերցող չեղավ, որովհետև ամբիոնից ներկայացուցիչ չկար ընթերցող: Գ. Դեմիրխանյանն ասաց, որ ընդհանուր բառեր են գրված, դիտողություններ չկան: Ա. Սահրադյանը, նա առաջարկեց, որ ֆակուլտետի տարվա հաշվետվությունը կազմելու համար ամբիոններից պահանջել հաշվետվությունները և դրա հիման վրա գրել ֆակուլտետինը: Գ. Դեմիրխանյանը, նա փաստեց, որ ինֆորմատիկա մասնագիտությամբ բակալավրիատի 9-ը շրջանավարտներից 8-ը ստացել են գերագանց, 1-ը՝ լավ, առկա մագիստատուրայի 17 շրջանավարտներից 9-ը՝ գերագանց, 7-ը՝ լավ, 1-ը՝ բավարար, հեռակա մագիստրոսները 18 և 1-ը նախորդ տարիներից մնացած, 4-ը՝ գերագանց, 10-ը և նախորդ տարիներից մնացած 1-ը լավ և 5-ը՝ բավարար: Նա նշեց նաև, որ պաշտպանությունների ժամանակ լինում էին խափանումներ, որը օգնող անձնակազմը անմիջապես շտկում էր և նորմալ հունով ամեն ինչ անցավ: Ուսանողները հաճախ շնորհակալություն էին հայտնում հանձնաժողովներին: Դեկանատի և իր կողմից Գ. Դեմիրխանյանը շնորհակալություն հայտնեց հանձնաժողովների անդամներին, նախագահներին և այն անձնակազմին, ովքեր կարողացան այս ամենը կազմակերպել և իրականացնել: Ա. Ղուշյան, նա առաջարկեց ոչ թե հաստատել հաշվետվությունները, այլ քննության արդյունքները: Գ. Դեմիրխանյանը, նա դիմեց խոհրդին էե ով է դեմ որ խորհուրդը հաստատի քննության արդյունքները: Ա. Ղուշյանը, նա ասաց, որ ինֆորմատիկա մասնագիտությամբ հանձնաժողովների հաշվետվությունները հաստատենք նույն ձևաչափով: Քվեարկության արդյունքում (միաձայն) հաստատեցին հաշվետվությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Քվեարկության արդյունքում (միաձայն) հաստատեցին հաշվետվությունները:

Գ. Դեմիրխանյանը, նա ասաց, որ դիպլոմները պատրաստ են որոշակի օրերի ուսանողներին կիրավիրենք և դեկանատում կտանք դիպլոմները: Բոլոր նախագահները պետք է գան դիպլոմները ստորագրեն և մինչև 15-ը տանք ռեկտորին ստորագրելու:

Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ. – ա) Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների դոկտոր Մ. Մկրտչյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ադ. Գրիգորյանը, նա ներկայացրեց, որ Մ. Մկրտչյանը բավարարում է ԲՈԿ-ի կողմից առաջադրված պրոֆեսորի կոչում շնորհելու բոլոր պահանջներին: Դոկտորական ատենախոսության պաշտպանությունից հետո նա ունի 25 գիտական հոդված և 1 ուսումնամեթոդական ձեռնարկ: Մ. Մկրտչյանի ղեկավարությամբ պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

Արտահայտվեցին Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, մ.գ.դ. Համլետ Միքայելյանը, պրոֆեսոր, ֆ.մ.գ.դ. Լուսինե Ղուլդագարյանը:

Քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ.- Դիմել ՀՊՄՀ գիտական խորհրդին Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների դոկտոր Մանուկ Մկրտչյանին պրոֆեսորի կոչում շնորհելու միջնորդությամբ:

Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ. – ք) Ֆ.մ.գ.դ Գ. Գ. Դեմիրխանյանի «Հարաբերականության հատուկ տեսության տարրերը» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը և ներկայացնել ՀՊՄՀ գիտխորհրդին այն տպագրության երաշխավորելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր, մ.գ.դ. Ռ. Ջիջյանը, ֆիզիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը, մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, մ.գ.դ. Համլետ Միքայելյանը:

Քվեարկության արդյունքում(միաձայն)

ՈՐՈՇԵՑԻՆ.– Գ.Գ. Դեմիրխանյանի «Հարաբերականության հատուկ տեսության տարրերը» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկ երաշխավորել տպագրության և ներկայացնել ՀՊՄՀ գիտական խորհուրդ ձեռնարկի տպագրությունը երաշխավորելու համար:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի
նախագահ`



Գ.Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար`

Ա.Հ. Գրիգորյան